- Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղում գտնվող քաղաքացի Վաչագան Հայկազի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /04-023-0051-0006/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնական կառուցված 10,2քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 4,5քմ արտաքին մակերեսով կաթսայատունը համաձայն «Աստղիկ Մանուկյան» ԱԶ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2024TGZXQN:
- Ինքնական կառույցների օրինականացման համար վճարը կազմում է օժանդակ նշանակության շինությունների 1քմ-ի համար 725.4 Հայաստանի Հանրապետության դրամ, $725.4 * 14.7 \text{քմ} = 10663$ /տաս հազար վեց հարյուր վաթսուներեք/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Ինքնական կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 10663 Հայաստանի Հանրապետության դրամ գումարը պետք է վճարվի Արտիմետ գյուղի N900325154103 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացնելու համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 18
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araxs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 315-Ա

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՂԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 161-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 18.1-րդ կետը և Վարդան Գրիգորյանի 2024 թվականի մարտի 12-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արաքս համայնքի Արաքս գյուղի վարչական ղեկավար Վարդան Գրիգորյանին տրամադրել 2023 թվականի ամենամյա արձակուրդի մի մասը՝ 15/տասնհինգ/ աշխատանքային օր տևողությամբ, 2024 թվականի մարտի 25-ից ապրիլի 12-ը ներառյալ :
2. Արաքս գյուղի վարչական ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարող նշանակել Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Սարգիս Նահապետյանին:
3. Վարդան Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի ապրիլի 15-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 15
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 314-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 56-րդ կետի 2-րդ ենթակետը, Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի կենտրոնական ճանապարհի մայթերերի սալարկման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված ԱՄԱՀ-ԽԱ-ԳԸԾՁԲ-23/68 պայմանագրի 7.5 կետը, կատարված լրացուցիչ աշխատանքների վճարման համար պայմանագրի «2» չափաբաժնի գումարը 7.32 /յոթ ամբողջ երեսուններկու/ տոկոսով ավելացնելու նպատակով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 04.5.1-ի (ճանապարհային տնտեսություն) 5134 հոդվածից հատկացնել 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 15
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 arqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 313-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 56-րդ կետի 2-րդ ենթակետը, Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի կենտրոնական ճանապարհի մայթեզրերի կառուցման և սալարկման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված ԱՄԱՀ-ԽԱ-ԳՀԾՁԲ-23/68 պայմանագրի 7.5 կետը, կատարված լրացուցիչ աշխատանքների վճարման համար պայմանագրի «1» չափաբաժնի գումարը 5.97 /հինգ ամբողջ իննսունյոթ/ տոկոսով ավելացնելու նպատակով .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի բյուջեի 04.5.1-ի (Ճանապարհային տնտեսություն) 5134 հոդվածից հատկացնել 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 15
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqh.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 312-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում գտնվող Սենիկ Գեվորգի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-023-0034-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Արտիմետ, Այգեստանի փողոց, 44 հասցե:
- Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 15
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqx.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 311-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով ՀՀ Արմավիրի մարզի, Արաքս համայնքի, Խորոնք գյուղի բնակիչ՝ Գոռ Ալեքսանյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ / վկայական N 0331/ կողմից կատարված չափագրությունը/ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագրի 040508EDU22G.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում գտնվող Գոռ Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-050-0114-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքից առանձնացված 0.1 հա մակերեսով մասին տրամադրել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Խորոնք, Հ. Շիրազի փողոց, 50/1 հասցե, 0.1999 հա մակերեսով մասին տրամադրել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Խորոնք, Հ.Շիրազ, 50 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



2024թ. մարտի 15
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqx.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2024 թվականի N 310-Ա

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետը և Ա/Ձ Վաչիկ Սահակյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Վաչիկ Սահակյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 1-ին եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



2024թ. մարտի 14
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.s.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2024 թվականի N 309-Ա

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետը և Ա/Ձ Անժելա Բաբուջյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել Ա/Ձ Անժելա Բաբուջյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 1-ին եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:

2.Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 14
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. հաչատրյան 1, 060887777 araqh.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2024 թվականի N 308-Ա

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետը և Ա/Ձ Մանվել Մելքոնյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել Ա/Ձ Մանվել Մելքոնյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրառատ գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 14
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.s.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2024 թվականի N 307-Ա

ՔՍԱՅՈՒՂԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը և Ա/Ձ Արման Գրիգորյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- 1.Թույլատրել Ա/Ձ Արման Գրիգորյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 1-ին եռամսյակի համար վաճառել քսայուղեր:
- 2.Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



2024թ. մարտի 14
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.s.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2024 թվականի N 306-Ա

ՔՍԱՅՈՒՂԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 6-րդ ենթակետը և Ա/Ձ Ռոբերտ Մգրոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- 1.Թույլատրել Ա/Ձ Ռոբերտ Մգրոյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար վաճառել քայուղեր:
- 2.Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 14
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqx.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2024 թվականի N 305-Ա

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱՆՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետը և Ա/Ձ Էմմա Մնացականյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել Ա/Ձ Էմմա Մնացականյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Զրարբի գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 1-ին եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



2024թ. մարտի 14
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqh.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2024 թվականի N 304-Ա

**ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱՆՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետը և «< Նոր Եվրոպա >> ՍՊԸ-ի տնօրեն Կարինե Գևորգյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել «<Նոր Եվրոպա>> ՍՊԸ-ի տնօրեն Կարինե Գևորգյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Զրարբի գյուղի վարչական տարածքում 2024 թվականի 1-ին եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2.Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ



2024թ. մարտի 14
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araq.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2024 թվականի N 303-Ա

**ՆՎԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՍԵՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Նվեր Հարությունյանի կողմից /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք գ Հայկաշեն 6 փ, 9տ, սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի, Արաքս համայնքի, Ակնաշեն գյուղում գտնվող, 04-005-0171-0005 կադաստրային ծածկագրով Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող հողամասում առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինություն կառուցելու համար տուգանք նշանակելու վերաբերյալ, պարզեց որ. Նվեր Հարությունյանը խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան թույլտվության, իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում, ինչի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից 2024 թվականի հունվարի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Նվեր Հարությունյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցվել է վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին 2024 թվականի հունվարի 29-ին Ծանուցման /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2024 թվականի հունվարի 31-ին տրված LO116542051AM ստացականը և 2024 թվականի փետրվարի 9-ին առաքանին հանձնված լինելու վերաբերյալ էլեկտրոնային ապացույց/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Արաքս համայնքում հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 2024 թվականի հունվարի 15-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 29-ի «Վարչական վարույթ հարուցելու մասին» ծանուցագիրը և այն ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի 2024 թվականի փետրվարի 28-ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Իրավախախտողի կողմից Արաքս համայնքի Ակնաշեն գյուղում գտնվող 04-005-0171-0005 կադաստրային ծածկագրով, Նվեր Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում առանց համապատասխան շինարարական թույլտվության կատարվել են շինարարական աշխատանքներ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2024 թվականի հունվարի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, Արաքսի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում Նվեր Հարությունյանը մասնակցել վարույթի լսմանը և պատշաճ կերպով իրազեկվել է կատարված իրավախախտման մասին ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված տուգանքի մասին:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի երկրորդ կարգի մասնագետի կողմից զեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող Նվեր Հարությունյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերը նշված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը. Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության: Համաձայն

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Տվյալ պարագայում իրավախախտողն առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի Նվեր Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղում գտնվող 04-005-0171-0005 կադաստրային ծածկագրով հողամասի վրա իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասերով նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ և հիմք ընդունելով

Արաքսի համայնքապետարանի իրավաբանական բաժնի երկրորդ կարգի մասնագետի 2024 թվականի փետրվարի 27-ի գեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող Նվեր Հարությունյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-005-0171-0005 կադաստրային ծածկագրով հողամասի վրա առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինություն կառուցելու համար 100.000 / մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. մարտի 14
Արաքս համայնք

